ՎԱՀՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ

Ա. Ս. ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ա. Պ. ԵՐՄՈԼՈՎԻ ԵՎ Ի. Ֆ. ՊԱՍԿԵՎԻՉԻ ՀԵՏ 1826-1828 թթ. ՌՈՒՍ - ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՄԻՆՉԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի առավել կարևոր հիմնահարցերից մեկն այդ պատերազմին Ա. Ս. Գրիբոյեդովի մասնակցության, նրա ծավալած ակտիվ դիվանագիտական գործունեության հարցն է:

Ուշագրավ է, որ մինչխորհրդային շրջանի համարյա բոլոր հեղինակներն էլ, բացասական վերաբերմունք ունենալով Ա. Ս. Գրիբոյեդովի նկատմամբ, նրա՝ դեկաբրիստների նկատմամբ ունեցած համակրական վերաբերմունքի և ազատամիտ գաղափարների պատճառով, այնուամենայնիվ բարձր են գնահատում նրա գործունեությունը Կովկասում և մասնավորապես նրա դիվանագիտական առաքելությունը 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի և դրան հաջորդող իրադարձությունների ընթացքում:

Այդ հեղինակների մեծ մասը համակարծիք է նրանում, որ ցարիզմի հենարանը հանդիսացող Կովկասյան կորպուսի առավել աչքի ընկնող գործիչներ Ա. Պ. Երմոլովը և Ի. Ֆ. Պասկևիչը, չնայած միմյանց հանդեպ ունեցած հաճախ անսքող ատելությանն ու հակամարտությանը, բարձր են գնահատել հաջորդաբար իրենց ենթակայության տակ ծառայած Ա. Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական ունակություններն ու տաղանդը՝ նրան վստահելով ամենադժվարին ու խճողված, միայն արևելյան դիվանագիտությանը հատուկ բազմաբարդ պրոբլեմների լուծումը:

Մինչխորհրդային հեղինակների մեծ մասն իրենց տեսակետները հաստատելու համար լայնորեն վկայակոչում են բուն սկզբնաղբյուրները՝ Ա. Ս Գրիբոյեդովի նոթերը, Ա. Պ. Երմոլովի և Ի. Ֆ. Պասկևիչի նամակներն ու զեկուցագրերը, պատերազմի անմիջական մասնակիցների հուշերն ու բազմաթիվ արխիվային տվյալներ:

Կովկասում Ա.Ս. Գրիբոյեդովի ծավալած գործունեության լուսաբանմամբ հանգամանորեն զբաղվել է Ա. Պ. Բերժեն, որն իր "А. С. Грибоедов на Кавказе (1818-1829гг)" [1] աշխատության մեջ, օգտագործելով բազմաթիվ արխիվային փաստաթղթեր ու վավերագրեր, ըստ ամենայնի ներկայացրել է Ա.Ս. Գրիբոյեդովի գործունեության առանձին դրվագները վերոհիշյալ պատմա-

[1] А. П. Берже, А. С. Грибоедов на Кавказе. Кавказский вестник, 1900 N 6, 7, 8, 9.

փուլում, մասնավորապես նրա փոխհարաբերությունները Ա. Պ. Երմոլովի և Ի. Ֆ. Պասկևիչի հետ, նրա դիվանագիտական ոդիսականն ու մտահվան հանգամանքները: Ա. Պ. Բերժեն իրավացիորեն նշում է, որ առաջին իսկ հանդիպումից Ա.Պ. Երմոլովը բարձր է գնահատել Ա. Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական կարողությունները: Ապացույցն այն է, որ երբ վերջինս 1821թ. Պարսկաստանից Թիֆլիս վերադառնալիս վնասել էր ձեռքը և խնդրում էր իրեն ազատել Պարսկաստանում դիվանագիտական գործունեությունից, Ա. Պ. Երմոլովը հասնում է նրան, որ ծառայության մեջ Ա. Ս. Գրիբոյեդովի աստիճանը բարձրացնում են և նա մնում է Թիֆլիսում՝ որպես նրա անձնական քարտուղար, ընդ որում նույն Երմոլովի միջնորդությամբ էլ Ա. Ս. Գրիբոյեդովը պարգևատրվում է[2]:

Թե ինչպիսի ջերմ վերաբերմունք ուներ Կովկասի կառավարչապետ Ա.Պ. Երմոլովը դեպի Ա.Ս.Գրիբոյեդովը, և թե ինչպես էր գնահատում նրա անձնական հատկանիշները, գրողի և դիվանագետի տաղանդը, հաստատվում է նրանով, որ երբ նա ստանում է դեկաբրիստների հետ կապերի մեջ կասկածյալ Ա. Ս. Գրիբոյեդովին ձերբակալելու հրամանը, վտանգելով սեփական հեղինակությունն ու պաշտոնեական դիրքը, իր մոտ է կանչում Ա. Ս. Գրիբոյեդովին և խորհուրդ տալիս շատ կարճ ժամկետում ոչնչացնել նրան վարկաբեկող բոլոր թղթերը: *«Գնա տուն և այրիր այն ամենը, ինչը քեզ կարող է վարկաբեկել: Քո ետևից ուղարկել են, և ես կարող եմ քեզ տալ մեկ ժամ ժամանակ...»*[3]:

Միաժամանակ ինքը՝ Ա. Պ. Երմոլովն իր անձնական պատասխանատվությամբ Գլխավոր շտաբի պետ բարոն Ի. Դիբիչին գրում է, որ Ա. Ս. Գրիբոյեդովին ձերբակալել է անհապաղ[4]:

Ա.Պ. Երմոլովի այդ բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ Ա.Ս. Գրիբոյեդովին հաջողվում է ազատվել բոլոր վարկաբեկող թղթերից, ոստիկանության ձեռքն են ընկնում սոսկ Գրոզնիում եղած թղթերը: Չորս ամիս կալանքի տակ գտնվելուց հետո միայն Ա.Ս. Գրիբոյեդովն ազատվում է՝ *«Հանցանշանների բացակայության»* պատճառով[5]:

Այս միջադեպն առավել հուսոզիչ և հանգամանորեն է շարադրված գեներալ Դենիս Դավիդովի մոտ:

«Ա. Ս. Գրիբոյեդովը «Խելքից պատուհաս» կոմեդիայի հռչակավոր հերոսակը բավական երկար ժամանակ ծառայում էր Ա. Պ. Երմոլովի մոտ, որը նրան սիրում էր ինչպես իր որդուն: Գնահատելով Գրիբոյեդովի գրական ձիրքերը, բայց գտնելով, որ նա բավականաչափ ընդունակ չէ ծառայության գործերը

---

[2] А. П. Берже, указ. соч. N 7, стр. 38, 42-43.
[3] А. П. Берже, указ. соч "Кавказский вестник", 1900, N8, стр. 38.
[4] Նույն տեղում, էջ 39:
[5] Նույն տեղում, էջ 39:

վարելու համար կամ ավելի ճիշտ՝ շատ քիչ եռանդ է ցուցաբերում դեպի ծառայության գործերն ու դրանք չի սիրում. Երմոլովը նրան երկարատև արձակուրդներ է տալիս, մի բան, որն ինչպես հայտնի է նա չէր սիրում անել այն չինովնիկների նկատմամբ, որոնք զուրկ չէին ձիրքերից ու եռանդից: Դեկտեմբերի 14-ի դեպքից հետո Երմոլովը ստացավ բարձրագույն հրաման՝ ձերբակալել Գրիբոյեդովին, գրավել նրա բոլոր թղթերը և սուրհանդակի հետ ուղարկել Պետերբուրգ ... Գրիբոյեդովը, որին ամեն ինչի մասին նախազգուշացրել էր Երմոլովի աղյուտանտ Տալիգինը, այրեց կասկածելի բովանդակություն ունեցող բոլոր թղթերը: Մի քանի ժամից հետո փոխգնդապետ Միշչենկոն ուղարկվեց նրա բնակարանը՝ խուզարկություն կատարելու և Գրիբոյեդովին ձերբակալելու համար, բայց նա, կատարելով երկրորդը, գտավ միայն մի մոխրակույտ, որը ցույց էր տալիս, թե Գրիբոյեդովն իր փրկության համար ծեռք է առել բոլոր անհրաժեշտ միջոցները: Երմոլովը Գրիբոյեդովի նկատմամբ իր, կարելի է ասել հայրական հոգատարությունն այն աստիճանի հասցրեց, որ նրա համար միջնորդություն հարուցեց ռազմական մինիստր Տատիշչևի առաջ»[6]:

Իր հերթին, Ա. Ս. Գրիբոյեդովը չափազանց բարձր էր գնահատում Ա. Պ. Երմոլովի ռազմական տաղանդը և անչափ ուրախ էր նրա մոտ ծառայելու համար: Իր «Ճանապարհորդական նոթեր»-ում Ա. Ս. Գրիբոյեդովը դեռ 1819թ. բազմաթիվ սիրալիր խոսքեր էր շռայլում իր նկատմամբ բարյացակամ տրամադրված Կովկասի կառավարչապետի հասցեին: *«Ի դեպ նրա (Երմոլովի – Վ. Ս.) մասին. Ի՜նչ պատվական մարդ է դա. քիչ է ասել, թե խելացի է, հիմա ամենքն էլ խելացի են, բայց բոլորովին ռուսական ձևով, ամեն ինչի պիտանի է, ոչ միայն մեծ գործերի, ոչ միայն մանրուքների համար. լավ նկատիր սա: Դրա հետ և անսահման պերճախոսություն, և ոչ թե այժմյան բեկբեկուն, կցկտուր նապոլեոնյան ճոռոմաբանություն. նրա խոսքերը թեկուզ անմիջապես գրի առ: Սիրում է շատ խոսել, բայց և այնպես ուրիշներին էլ թույլ է տալիս խոսել. երբեմն (ո՞վ մեզը չունի) շատ է խոսում այնպիսի բաների մասին, որոնք քիչ է հասկանում. բայց այդ ժամանակ էլ, եթե չհամոզվի՝ այնուամենայնիվ ստիպում է լսել իրեն: Այդ դեպքերը լավ եմ ես հիշում, որովհետև նրա հետ շատ էի վիճում՝ իհարկե այն մասին, ինչին հաստատ հավատացած էի, այլ կերպ չէր կարող լինել. սակայն ոչ մի անգամ հաղթանակ չտարա. գուցե և ուղղեի: Ամեն օր տեսնում էի նրան. մի քանի ժամ միասին էինք անցկացնում, և հարմար պահերին՝ մի քիչ նրան ճանաչելու համար: Նա Թիֆլիս էր եկել հանգստա-*

---

[6] Դենիս Դավիդով. «Ռազմական հուշեր» թարգմ. Հ. Մազմանյանի, Հայպետհրատ, Երևան, 1942թ. էջ 522-523:

նալու՝ լեռնցիների դեմ վարած արշավանքից հետո, որը մարտին նորից է ծեռնարկուս...»[7]:

Բայց Ա. Ս. Գրիբոյեդովի բնութագրմամբ Ա. Պ. Երմոլովը միայն խելացի և սիրալիր զրուցակից չէր, որի հետ կարելի էր բանավիճել բազմաթիվ հարցերի շուրջ: Ըստ նրա կերտած դիմանկարի՝ Ա. Պ. Երմոլովը նաև դաժան և անողոք բռնակալ էր, որը կանգ չէր առնում ոչ մի միջոցի առաջ՝ իրեն հանձնված երկրամասը հպատակեցնելու համար: *«Պետք է տեսնել ու լսել թե ինչպես է նա հավաքում Կովկասի այն կողմի կաբարդինյան և այլ իշխաններին. վարժ քարգմանների միջոցով, որոնք չեն համարձակվում բաց թողնել նրա մի բառն անգամ, այնպես է նա ահաբեկում ունկնդիրների երևակայությունը մահակով, կախաղանով, ամեն տեսակ մահապատիժներով, հրդեհներով. սա խոսքով, իսկ գործով նմանապես հանդարտեցնում է անհնազանդներին՝ զենքի դիմելով, կախում, հրկիզում է նրանց գյուղերը – ի՞նչ արած»*[8]:

Ա.Պ. Երմոլովը ցարիզմի գաղութային քաղաքականության հետևողական իրագործողն էր, պետերբուրգյան արքունիքի հլու կամակատարը, որի դաժան գործողությունները, երբեմն հանիրավի, արդարացնում էր Ա. Ս. Գրիբոյեդովը:

Բաժանելով Դենիս Դավիդովի կարծիքը՝ համոզված ենք, որ Ա. Ս. Գրիբոյեդովի հարգանքը Ա. Պ. Երմոլովի նկատմամբ պետք է բացատրել ոչ միայն դեպի նրա ռազմական տաղանդը տածած համակրանքով, այլև նրանով, որ Ա. Պ. Երմոլովը, Ա. Ս. Գրիբոյեդովի մեջ բարձր գնահատելով առաջին հերթին գրողին, հնարավորություն էր տալիս նրան ազատ լինել դիվանագիտական գործերից և ժամանակի մեծ մասը հատկացնել գրական պարապմունքներին:

Այսուհանդերձ, համակարծիք չենք Դ. Դավիդովի հետ, որը փոքր-ինչ միտումնավոր է գնահատում Ա. Պ. Երմոլովի վերաբերմունքը Ս. Ս. Գրիբոյեդովի գործունեության վերաբերյալ, գտնելով, որ Ա. Պ. Երմոլովը համոզված էր, թե Ա. Ս. Գրիբոյեդովը *«բավականաչափ ընդունակ չէ ծառայության գործերը վարելու, կամ ավելի ճիշտ շատ քիչ եռանդ է ցուցաբերում ծառայության գործերի նկատմամբ, քանի որ դրանք չի սիրում ...»*.

Կարծում ենք, որ մի բան է *«ընդունակ չէ»*, այլ բան՝ *«քիչ եռանդ է ցուցաբերում»*: Ակամայից դա հաստատում է ինքը՝ Դ.Դավիդովը: Դիվանագիտությանն անհրաժեշտ ճարտար լեզուն. օտար լեզուների իմացությունը, սառնասրտությունը, խառնվածքի հակասականությունն Ա. Ս. Գրիբոյեդովի բարեմասնություններից էին: Այնպես որ Ա. Ս. Գրիբոյեդովին դիվանագիտական

---

[7] Ա. Ս. Գրիբոյեդով - «Ճանապարհորական նոթեր» Կովկաս-Պարսկաստան. Թարգմ. Հ Ենիկոլոպովի, կազմված և ծանոթագրած հրատարակությունից: Հայպետհրատ. Երևան, 1945թ. էջ 11:

[8] Նույն տեղում, էջ 12:

տաղանդի բացակայության մեջ մեղադրելը սխալ է: Շատ ավելի ճիշտ է այն, որ գրական զբաղմունքները Ա.Ս. Գրիբոյեդովը գերադասում էր դիվանագիտականից, ուստի ավելի քիչ եռանդ էր դրսևորում դրանց կատարման համար:

Ա.Պ. Երմոլովը չէր կարող Ա.Ս. Գրիբոյեդովին մեղադրել դիվանագիտական ունակությունների բացակայության մեջ, քանզի բազմիցս համոզվել էր, թե ինչպիսի եռանդով և հետևողականությամբ է Ա. Ս. Գրիբոյեդովը ձեռնամուխ լինում իրեն տրված դիվանագիտական հանձնարարությունների կատարմանը: Այդ հարցում, ըստ մեզ, միանգամայն իրավացի է Վ. Պոտտոն, որը, բարձր գնահատելով Ա. Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությունը, գրում է. *«Հատկապես նրա (Ա.Ս. Գրիբոյեդովի – Վ.Ս.) էներգիային և հետևողականությանն է, օրինակի համար պարտական Երմոլովը, որ պարսիկները համաձայնվեցին ազատել բոլոր ռուս գերիներին, որոնք գտնվում էին գերության մեջ Ցիցիանովի ժամանակներից սկսած»*[9]:

Չպետք է մոռանալ, որ Ա.Պ. Երմոլովը երկար տարիներ գտնվելով Կովկասում, քաջածանոթ էր արևելյան բարքերին և ինքն էլ փայլուն դիվանագետ էր: Նախ՝ Ա.Պ. Երմոլովը, եթե ցանկանար էլ, չէր կարող իրեն հավասար դիվանագետ համարել Ա.Ս. Գրիբոյեդովին, երկրորդ՝ որ եթե այդ ունակությունների բացակայությունը տեսներ Ա. Ս. Գրիբոյեդովի մեջ, կաշխատեր օր առաջ ազատվել նրանից: Իսկ այն հանգամանքը, որ Ա. Պ. Երմոլովը շատ ժամանակ էր տալիս Ա.Ս. Գրիբոյեդովին՝ զբաղվելու գրական գործունեությամբ, թերևս խոսում այն մասին, որ Կովկասի հռչակավոր նվաճողը հանձին Ա.Ս. Գրիբոյեդովի առաջին հերթին տեսնում էր տաղանդավոր գրողի, որի գրական ստեղծագործությունները շատ ավելի անհրաժեշտ էին Ռուսաստանին, քան նրա դիվանագիտական գործունեությունը:

Հարկ է նշել, որ Ի. Ֆ. Պասկևիչի Կովկաս ժամանելուց հետո Ա. Ս. Գրիբոյեդովը համարյա ժամանակ չուներ գրականությամբ զբաղվելու[10] և, ինչպես նշում է Վ. Պոտտոն, իրեն, չարդարացված ձևով դնում էր կրակի տակ[11]:

Անհրաժեշտ է նշել, որ իհարկե, Ի.Ֆ. Պասկևիչի՝ Կովկաս գալով Ա.Ս. Գրիբոյեդովի նշանակությունը ոչ միայն չնվազեց, այլև զգալիորեն բարձրացավ:

Որոշ հեղինակներ Ա. Ս. Գրիբոյեդովի ծառայությունը Ի. Ֆ. Պասկևիչի մոտ համարում են ուղղակի դավաճանություն Ա. Պ. Երմոլովի հանդեպ: Դենիս Դավիդովը, որը Ա. Ս. Գրիբոյեդովին հրաշալի մարդ և գրող էր համարում, խիստ

---

[9] В. Потто, "Кавказская война в отд. очерках, эпизодах, легендах и биографиях" Т III Персидская война 1826-1828гг. СПб, 1886-1888гг. стр. 606. Так же В. Потто, "Посольство и смерть Грибоедова. Грибоедов полномочный министр при персидском дворе". Стр.8

[10] В. Потто, указ. соч. стр. 11.

[11] Նույն տեղում:

վիրավորված էր վերջինիս նմանօրինակ քայլից և այն համարում էր բացարձակ դավաճանություն Ա. Պ. Երմոլովի նկատմամբ:

«Պետերբուրգում, Գլխավոր շտաբում կարճ ժամանակ պահվելուց հետո Գրիբոյեդովն ազատվեց, պարգևատրվեց աստիճանով ու նորից ուղարկվեց Կովկաս: Այդ ժամանակից հսկայական փոփոխություն կատարվեց Գրիբոյեդովի մեջ, որին մինչ այդ մենք սիրում էինք որպես սրամիտ, ազնիվ և տաղանդավոր ընկերոջ: Իր սրտում խեղդելով երախտագիտության զգացումը դեպի իր բարերար Երմոլովը, նա կարծես թե Պետերբուրգում խոստում տվեց աջակցել կառավարությանը՝ միջոցներ փնտրելու և մեղադրելու այս արժանավոր մարդուն, որն իր նկատմամբ ատելություն էր առաջացրել նոր թագավորի մեջ ... Նա շատ մտերիմ հարաբերությունների մեջ մտավ Վանկա - Կայենի, այսինքն Կարգանովի (Կովկասյան կորպուսում հայ թարգմանիչ – Վ. Ս.) հետ, որն ամենաստոր մատնություններն էր հորինում Երմոլովի դեմ: Պասկևիչը, որի աչքում Գրիբոյեդովն այնքան անարժան եռանդ էր ցուցաբերում, նրա մասին միջնորդություն հարուցեց թագավորի առաջ: Մեզ բոլորիս համար ցավալի էր հիասթափվել այդ շնորհալի գրողից և հրաշալի սրամիտ մարդուց, որը Պասկևիչի Վրաստան գալուց հետո շուտով ինձ և Շիմանովսկուն ասաց հետևյալ խոսքերը. «Մի՞թե դուք ուզում եք, որ այդ հիմարը, որին ես մոտիկից ճանաչում եմ (խոսքը Պասկևիչի մասին է - Վ. Ս.) հաղթանակ տանի Ռուսաստանի ամենախելոք և ամենաբարեմիտ մարդկանցից մեկի դեմ (ակնարկում է Երմոլովին – Վ. Ս.). հավատացեք, որ մեր մարդը նրան կխաբի և Պասկևիչը, որ ժամանել է հևհև, խայտառակ կերպով կմեկնի այստեղից»: Դրանից հետո շուտով նա ասում էր մեզանից շատերին. «Պասկևիչն անտանելի հիմար է, օժտված է միայն խոխոլներին հատուկ խորամանկությամբ: Նա չունի ոչ գիտելիքներ, ոչ համակրանք դեպի այն ամենը, ինչ-որ գեղեցիկ է ու վեհ, բայց այն հաջողությունների հետևանքով, որոնց վրա հույս դնելու իրավունք նա չուներ և որոնցով պարտական է Երմոլովյան հիանալի զորքերին և ճարտար ու խիզախ Վելյամինովին ու Մադաթովին, նա շուտով կգրկվի և իր փոքրիկ բանականությունից»:

Բայց Գրիբոյեդովը միևնույն ժամանակ, ըստ երևույթին փառասիրությունից դրդված, գործադրում էր իր խելքն ու ընդունակությունները, որպեսզի ավելի ու ավելի արժանանար Պասկևիչի բարեհաճությանը, իսկ Պասկևիչը նրա ազգականն էր՝ կնոջ կողմից»[12]:

---

[12] Դենիս Դավիդով. «Ռազմական հուշեր», 1942թ. Երևան, 523-524, տես նաև "Грибоедов, его жизнь и гибель в мемуарах современников", ред. Зин. Давыдова, изд. "Красная газета", Л. 1929г., Դ. Զավալիշինի և Ն. Մուրավյով – Կարսկու հուշերը, էջ 80, 123

Ակնհայտ է, որ երկարաշունչ այս տողերը ոչ միայն մեկնաբանում են Ա. Ս. Գրիբոյեդովի՝ Ա. Պ. Երմոլովի հանդեպ կատարած «դավաճանությունը», այլև, որոշ վերապահումներով, ճշմարտացիորեն տալիս Կովկասյան կորպուսի երկու նշանավոր զորահրամանատարների գնահատականը՝ որպես ռազմական ու պետական գործիչների: Բայց, եթե այդ երկու գործիչներին տրված Դ. Դավիդովի գնահատականն ընդհանուր առմամբ համապատասխանում է պատմական իրականությանը, ապա նույնը չի կարելի ասել Ա. Պ. Երմոլովի հանդեպ Ա. Ս. Գրիբոյեդովի վերաբերմունքի և դրան՝ Դ. Դավիդովի տված մեկնաբանության առնչությամբ:

Ամեն դեպքում չի կարելի համաձայնել Դենիս Դավիդովի այն պնդմանը, թե Ա. Ս. Գրիբոյեդովը միջոցներ էր փնտրում մեղադրելու և վարկաբեկելու արժանավոր մարդուն՝ Ա. Պ. Երմոլովին:

Հանգամանքների բերումով ստիպված լինելով մնալ Կովկասում և ծառայության անցնել Ի. Ֆ. Պասկևիչի մոտ՝ Ա. Ս. Գրիբոյեդովը չէր կարող չգիտակցել, որ այդ քայլն իրեն կհեղինակազրկի նախկին բարերարի՝ Ա. Պ. Երմոլովի աչքում: Նա դրանում համոզվեց հետագայում Պետերբուրգում՝ արդեն պաշտոնազրկված Ա.Պ. Երմոլովի սառն ընդունելությունից: Խղճի խայթը տանջում էր Ա. Ս. Գրիբոյեդովին և թերևս դա էր պատճառը, որ անցնելով Մոսկվայով՝ նա իր բարկամ Ստեփան Նիկիտիչ Բեգիչևին ասաց. *«Ես մշտական չարագործ եմ Երմոլովի նկատմամբ»*[13]: Սակայն մեջբերելով այս իրոք սրտաբուխ բառերը՝ Դ. Դավիդովն իրեն իրավունք է վերապահում հանիրավի կերպով մեղադրել այդ ժամանակի մեծ գրողին ու մեծ գործչին: Այս հանգամանքը համահունչ չէ ճշմարտությանը:

Չէ՞, որ հենց ինքը՝ Դ. Դավիդովը, բազմիցս շեշտում է Ա. Ս. Գրիբոյեդովի՝ դեպի Ա. Պ. Երմոլովը ունեցած անկեղծ հարգանքի ու նվիրվածության մասին (դրանում մեզ անվերապահորեն համոզում են Ս. Բեգիչևին ուղղված Ա. Ս. Գրիբոյեդովի նամակները)[14]:

Երբ Դ. Դավիդովը խոսում է Ա. Պ. Երմոլովի և Ի. Ֆ. Պասկևիչի հանդեպ Ա. Ս. Գրիբոյեդովի վերաբերմունքի մասին, ստիպված է խոստովանել, որ վերջինս նախապատվությունը միշտ տվել է Ա. Պ. Երմոլովին: Նույնիսկ այն ժամանակ, երբ նախկին ժամիշխանավորը՝ Կովկասի երբեմնի ահեղ նվաճողը, պաշտոնազրկվել էր, ոչ մի դեր չէր կարող խաղալ Ա. Ս. Գրիբոյեդովի կարիերայում, Ա. Ս. Գրիբոյեդովը ջերմությամբ էր արտահայտվում նրա մասին, մինչդեռ հակառակը՝ բացեիբաց արհամարանքով էր խոսում Ի. Պասկևիչի մասին:

---

[13] Դ. Դավիդով. «Ռազմական հուշեր», Երևան, 1942թ., էջ 525
[14] Ա. Ս. Գրիբոյեդով, «Ճանապարհորդական նոթեր» Երևան, 1945թ. էջ 11-12:

Կարծում ենք, որ Դ. Դավիդովի մեղադրանքները Ա. Ս. Գրիբոյեդովի հասցեին՝ Ա. Պ. Երմոլովի հանդեպ ստոր դավաճանության և նրան վարկաբեկելու հարցում, միտումնավոր են:

«Գրիբոյեդովը, որ Թուրքմենչայի դաշնագրով գնացել էր թագավորի մոտ, առանց քաշվելու ասում էր ինձ, Շիմանովսկուն և ուրիշ շատերին. «Պասկևիչն այնքան անտանելի է, որ ես Վրաստան կվերադառնամ ոչ այլ կերպ, բայց եթե իբրև դեսպան պարսկական արքունիքին կից»»[15]:

Դիրքի կամ պաշտոնի հասնելու ձգտումը համարում ենք բնական երևույթ, սակայն այստեղ էականը ոչ թե այն էր, որ Ա. Ս. Գրիբոյեդովը ձգտում էր բարձր դիվանագիտական պաշտոնների, այլ Պասկևիչից անպայման հեռու լինելու ցանկությունը, մի հանգամանք, որին ուշադրություն չի դարձրել 1812թ. հերոս պարտիզանը:

Միտումնավորություն ենք տեսնում նաև նրանում, որ Դ. Դավիդովը համենայնդեպս չի մտորում այն մասին, թե ինչպես կարող էր իրեն դրսևորել (ավելի ճիշտ՝ պետք է դրսևորեր) Ա. Ս. Գրիբոյեդովը Ի. Ֆ. Պասկևիչի ժամանելուց հետո և թե ինչ ճակատագիր կսպասվեր նրան, եթե ընդդիմանար Ի. Ֆ. Պասկևիչին: Կարծում ենք նաև, որ Ի. Ֆ. Պասկևիչի հարցում Դենիս Դավիդովը պե՛տք է, որ նման մոտեցում դրսևորեր, որովհետև, վերջին հաշվով, վերջում ինքն էլ էր հայտնվել անբարեհաճ վիճակում. նրանց ճակատագրերն ինչ-որ տեղ նման էին:

Ըստ մեզ միանգամայն իրավացի է Ա. Պ. Բերժեն, որ համամիտ չլինելով Դ. Դավիդովի հետ (վերջինս, ինչպես ասվեց, Ա. Պ. Երմոլովի հանդեպ Ա. Ս. Գրիբոյեդովի պահվածքը համարում է անշնորհակալ քայլ)՝ չի մեղադրում Ա. Ս. Գրիբոյեդովին՝ Ի. Ֆ. Պասկևիչի մոտ ծառայության անցնելու համար: Ա. Պ. Բերժեն դա համարում է Ա. Ս. Գրիբոյեդովի կողմից կատարված հարկադրական քայլ[16]:

1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմը լուսաբանող մինչ-խորհրդային շրջանի պատմաբանների մեծ մասը, մեր կարծիքով, ըստ ամենայնի չեն լուսաբանել Ա. Ս. Գրիբոյեդովի նկատմամբ Ի. Ֆ. Պասկևիչի տածած բարյացակամ վերաբերմունքի բոլոր շարժառիթները: Ինչպես հայտնի է, 1826-1828թթ. պատերազմի ընթացքում Ա. Ս. Գրիբոյեդովը շարունակեց դիվանագիտական իր ծառայությունը և նույնիսկ զգալիորեն առաջ քաշվեց. ինչը որոշ պատմաբաններ, մասնավորապես իշխան Շչերբատովը համարում

---

[15] Դ. Դավիդով. նշվ. աշխատություն. էջ 525-526:

[16] А. П. Берже, А. С. Грибоедов на Кавказе "Кавказский вестник" Тифлис, 1900г., N 9, стр. 30.

են մեծ բարերարություն Ա. Ս. Գրիբոյեդովի նկատմամբ և հակված են այն բացատրելու Ի. Ֆ. Պասկևիչի և Ա. Ս. Գրիբոյեդովի ազգակցությամբ[17]:

Ինչ խոսք, որ կնոջ կողմից ազգակցությունը որոշակի դեր խաղացել է, բայց իրականում Ի. Ֆ. Պասկևիչի բարյացակամ վերաբերմունքը Ա. Ս. Գրիբոյեդովի հանդեպ պետք է բացատրել ոչ միայն ազգակցությամբ (Ա. Ս. Գրիբոյեդովը Ի. Պասկևիչի կնոջ զարմիկն էր – Վ. Ս), այլև առաջին հերթին Ի. Ֆ. Պասկևիչի անձնական շահերով: Բազմիցս առիթ ենք ունեցել համոզվելու, որ մինչխորհրդային շրջանի շատ հեղինակներ, չնեղանչելով պատմական իրականության դեմ, ստիպված են եղել ընդունել, որ թեև Ի. Ֆ. Պասկևիչն օժտված էր անձնական բացառիկ խիզախությամբ և քաջությամբ[18], բայց որպես պետական և ռազմական գործիչ՝ միջակ և սահմանափակ ընդունակությունների տեր անձնավորություն էր (բացառությամբ՝ իշխան Շչերբատովի–Վ. Ս), որն ի վիճակի չէր հասկանալու սուվորովյան ավանդույթներով դաստիարակված Կովկասյան կորպուսի զինվորների ոգին: Նա խիստ նպատակասլաց էր իր գործողություններում և, չխորշելով ոչ մի ինտրիգից, ազատվում էր անցանկալի հակառակորդներից: Նրա գլխապտույտ հաջողություններն իր նախորդների աշխատանքի արդյունքն էին, ինչպես նաև ճակատագրի շնորհը: ճակատագիրն, իրոք, առատաձեռն եղավ Նիկոլայ Առաջինի նոր սիրելիի հանդեպ[19]: Այս տեսակետից չափազանց հատկանշական են Դ. Դավիդովի՝ Ի. Ֆ. Պասկևիչին տրված բնութագրումները:

«Պասկևիչը հիանալի քաջությամբ հանդերձ՝ օժտված չէ սրատեսությամբ, ոչ վճռականությամբ, ոչ ինքնուրույնությամբ, որ հատուկ են միայն բարձր խարակտերներին: Սչքի չընկնելով ոչ ոգու մի առանձին կայունությամբ, ոչ պերճախոսությամբ, ոչ թոթի վրա իր մտքերը շարադրելու ընդունակությամբ, ոչ սիրալիր վարմունքով սրտեր գրավելու կարողությամբ և ոչ էլ գիտության որևէ ճյուղից տեղեկություններ ունենալով, նա ի վիճակի չէր ըմբռնելու զինվորների ոգին և այս պատճառով երբեք չի կարող տիրանալ նրանց սրտերին: Ներկայումս ստորաքարշ շողոքորթների ամբոխները փառաբանում են թագավորի այդ սիրելիին ու խորհրդականին, նրան վերագրելով այնպիսի հատկություններ ու արժանիքներ, որոնք նրա մեջ առաջ ոչ ոք երբեք չէր նկատել: Պասկևիչը մինչև քառասուն հինգ տարեկան հասակը համարվում էր քաջ, բայց և խիստ սահմանափակ մի մարդ նույնիսկ իր ընտանիքում ...

---

[17] "Генерал – фельдмаршал князь Паскевич. Его жизнь и деятельность". По неизд. источникам составил. Ген. Штаба генерал – майор князь Щербатов. II том. СПб 1889г., гл. VI, стр. 248 - 249, III том, 1890г., гл. II, стр. 95.

[18] Դա նշում են Վ. Պուտտոն, Դ. Դավիդովը, Շչերբատովը և ուրիշներ:

[19] В. Потто, "Кавказская война" том. 3, стр. 178.

Լինելով սոսկ միջակ խելքի տեր, նա իր բոլոր հայրենակիցների, մալոռուսների նման արտասովոր կերպով խորամանկ է և այս պատճառով ամենայն իրավամբ կարող է անվանվել անդրդնեպրյան իտալացի... Գրիբոյեդովի նախագուշակությունները կատարվեցին. Պասկևիչի գոռոզությունը, հպարտությունը, անծնապաստանությունը սահման չունի, Պասկևիչի, որի գլուխը բոլորովին պտտվում է հաջողություններից ու մեծարանքներից. նա իրեն համարում է մեծ մարդ և ժամանակակից առաջին զորավար ...»[20]:

Ճակատագրի շնորհի առիթով Դ. Դավիդովը գրում է. «Մի անգամ շողոքորթները նրա (Պասկևիչի – Վ. Ս.) հոր, Ֆյոդոր Գրիգորևիչ Պասկևիչի հետ խոսելիս բացականչեցին. «Վարշավյան իշխանը (Պասկևիչը – Վ. Ս.) հանճար է»: Խելոք ծերունին մալոռուսերեն լեզվով առարկեց. «Հանճարը հանճար չէ, բայց որ բախտը բերում է, բերում է»[21]:

Ինչպես Դ. Դավիդովը, այնպես էլ մինչխորհրդային շրջանի ռուս և հայ շատ հեղինակներ շեշտում են, որ Ի. Ֆ. Պասկևիչի գրիչն աչքի չէր ընկնում պերճախոսությամբ և փայլուն կերպով գրված նրա շատ էջերն արդյունք էին ուրիշի՝ առաջին հերթին Ա. Ս. Գրիբոյեդովի տքնաջան աշխատանքի[22]:

Լիովին համակարծիք լինելով Դ. Դավիդովի և Վ.Պոտտոյի հետ՝ Ի. Ֆ. Պասկևիչի բնութագրության հարցում, միաժամանակ գտնում ենք, որ Ա. Ս Գրիբոյեդովի առաջնթացը ծառայության մեջ պետք է բացատրել ոչ միայն Ի. Ֆ. Պասկևիչի մատուցած օժանդակությամբ, այլև Ա. Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական լուրջ ընդունակություններով, որոնցում Ի. Ֆ. Պասկևիչը ևս, Ա. Պ. Երմոլովի նման, բազմիցս առիթ է ունեցել համոզվելու: Պատահական չէր, որ նա Արտաքին գործոց նախարար կոմս Նեսելրոդեին խնդրում էր Ա. Ս. Գրիբոյեդովին թողնել իր մոտ ծառայության[23]:

Համոզված ենք, որ Ա. Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական ընդունակությունները Ի. Ֆ. Պասկևիչին պետք էին այնքանով, որքանով նպաստում էին նրա անձնական փառքի բազմապատկմանը: Ի.Ֆ. Պասկևիչը Ա. Ս. Գրիբոյեդովի հետ վարվում էր այնպես, ինչպես իր մյուս բոլոր ստորադրյալների հետ: Թերևս դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ քաջ գիտակցելով, թե ինչպիսի վախճան կարող է սպասել Ա. Ս. Գրիբոյեդովին, Ի. Ֆ. Պասկևիչը վերջինիս չարգելեց մեկնել Թեհրան՝ բացահայտ մահվան գիրկը:

Սրանով, կարծում ենք, բացառվում են ազգակցական կապերի առաջնահերթության մասին տեսակետները:

---

[20] Դ. Դավիդով, «Ռազմական հուշեր» Երևան, 1942թ., էջ 528 - 529:
[21] Նույն տեղում, էջ 529 - 530:
[22] В. Потто, "Посольство и смерть Грибоедова" стр. 11.
[23] АКАК, том VII, стр. 539 - 540, Тифлис 1888г.

Ամփոփելով ասվածը, մենք գտնում ենք, որ պետք է նշել մի շարք գործոններ ևս, որոնք նպաստեցին Կովկասում Ա. Ս. Գրիբոյեդովի մնալուն և Ի. Ֆ. Պասկևիչի մոտ ծառայության անցնելուն:

1. «Խելքից պատուհաս» պիեսի և դեկաբրիստական ապստամբությանն առնչվելու հետ կապված՝ Պետերբուրգի պաշտոնական շրջաններում և բարձր հասարակության մեջ Ա.Ս. Գրիբոյեդովի նկատմամբ անվստահության մթնոլորտը շարունակվում էր, ուստի վերջինս գերադասում էր մնալ Կովկասում և կյանքը վտանգել գնդակների տակ (ինչպես գրում է Ի. Ֆ. Պասկևիչն իր կնոջը՝ Ա. Ս. Գրիբոյեդովի զարմուհուն)[24], քան, առաջին հերթին, գրողի փառք ստեղծել Պետերբուրգում՝ իր համար անբարյացակամ մթնոլորտում: Իսկ գրական սալոններում, ուր նրա երկը, դեռ չտպագրված, ձեռքից ձեռք էր անցնում, նա ինչքան էլ ցանկանար, միևնույն է, միայն կարող էր երկրորդը լինել, քանի որ ռաջնության դափնին, իրավամբ, պատկանում էր մյուս Ալեքսանդր Սերգեևիչին՝ Մեծն Պուշկինին:

2. Որոշակիորեն, գոնե իր առաջադեմ գաղափարներով սերտորեն կապված լինելով շատ դեկաբրիստների հետ, ամիսներ անցկացնելով Գլխավոր շտաբի արգելասենյակում՝ Ա. Ս. Գրիբոյեդովը մոտիկից տեսել է այն ծաղրալից վերաբերմունքն ու կամայականությունը, որ դրսևորում էր Հետաքննող հանձնաժողովը հարցաքննվող դեկաբրիստների նկատմամբ: Նրան թերևս դժվար կլիներ մնալ այնտեղ (Պետերբուրգում – Վ. Ս.), ուր ի կատար էր ածվել նշանավոր դեկաբրիստների մահապատիժը: Ատելությունն ու արհամարանքը Նիկոլայ Առաջինի և նրա արքունիքի հանդեպ, ինչո՞ւ չէ, նաև անձնապաշտպանության բնազդը, նրան թելադրեցին շուտափույթ հեռանալ մայրաքաղաքից:

3. Բարձրաշխարհիկ ընտիր հասարակությունից կապերը խզելու և մայրաքաղաքից միառժամանակ հեռանալու վճիռը բացատրել կարելի է նաև այն հանգամանքով, որ Ա. Ս. Գրիբոյեդովը քաջ գիտակցում էր, որ գտնվելով Կովկասյան կորպուսում, իր ունեցած բազմաթիվ ազդեցիկ կապերի շնորհիվ կարող էր մեծ օգնություն ցույց տալ դեկաբրիստներին հարած, հետո աստիճանազրկված ու Կովկաս աքսորված շատ անձանց:

Պատահական չէ, որ Կովկաս աքսորված դեկաբրիստներից շատերը ջերմ հարաբերություններ ունեին Ա. Ս. Գրիբոյեդովի հետ՝ նրան համարելով իրենց մարդը և անհրաժեշտության դեպքում դիմում էին նրան:

4. Կովկասում Ա. Ս. Գրիբոյեդովի մնալու ամենակարևոր պատճառներից մեկն էլ այն էր, որ նա սերտորեն կապված էր Անդրկովկասի, մասնավորապես

---

[24] "Беседы в обществе любителей российской словесности" М., 1868г., вып. II, стр. 26. (Մեջբերված Վ. Ա. Պարսամյանի «Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները», Երևան 1947թ. աշխատության մեջ, էջ 62):

Թիֆլիսի հայկական, վրացական առաջավոր շրջանների հետ, որոնցից շատերի տների մշտական հյուրն էր, հասարակության սիրելին[25]:

5. Կա մի հանգամանք ևս, որին նույնպես պետք է ուշադրություն դարձնել: Լինելով աղքատացած ազնվականական ընտանիքի զավակ, չունենալով նյութական շռայլ միջոցներ՝ Ա. Ս. Գրիբոյեդովը ստիպված էր դիվանագիտական կորպուսում կատարած իր հաստատ աշխատանքով (նա կոլեգիական ասեսոր էր – Վ. Ս.) հոգալ ոչ միայն իր, այլև հարազատների նյութական կարիքները: Լինելով փայլուն կրթության տեր, տիրապետելով լեզուների՝ նա Կովկասում և Պարսկաստանում կարող էր արագորեն հաջողության հասնել և իր համար ստեղծել նյութական բարեկեցություն: Բայց նույնիսկ այդ դեպքում, երբ նրա համար ապահովված էր Ի.Ֆ. Պասկևիչի հզոր հովանավորությունը, Թուրքմենչայի պայմանագիրը Պետերբուրգ տանելուց հետո նա գերադասեց մեկնել Թեհրան, քան մնալ գործող Կորպուսում՝ իր հզոր ազգականի խնամակալության տակ, որի արատներն ու սահմանափակությունը բազմիցս ստիպված էր ընդգծել:

6. Նշենք, նաև որ Ա.Ս. Գրիբոյեդովի «դավաճանությունը», ծառայությունը Ի. Ֆ. Պասկևիչի մոտ կարելի է բացատրել նաև Ա. Ս. Գրիբոյեդովի անձնական որոշ հատկանիշներով՝ ոգու անկայունությամբ, փառասիրությամբ, կարիերիզմով, անհաստատ բնավորությամբ, որոնք դիվանագետին բնորոշ հատկանիշներ են, այսպես ասած՝ «մաքիավելիական առաքինություններ», որոնց մասին, դեռ ժամանակին, ընդգծել են Ա. Ս. Գրիբոյեդովի ժամանակակիցները[26]: Այդ հատկանիշները, ինչ խոսք, որոշակի դեր են խաղացել Ա. Ս. Գրիբոյեդովի և վերելքի և անկման համար. մի հանգամանք, որն այժմ լայնորեն մեկնաբանվում է ժամանակակից պատմագրության կողմից[27].

---

[25] А. П. Берже, "Грибоедов на Кавказе" (1818-1819гг.). Кавказский вестник, "Тифлис" 1900 N 7, стр. 29-31.

[26] "Грибоедов, его жизнь и гибель в мемуарах современников", Л. 1929г. (Ա. Ն. Բեգիչևի, Ն. Վ. Շիմանովսկու Դ. Ի. Զավալիշինի, Ն. Մուրավյով – Կարսկու վկայությունները)

[27] В. Ярхо – "Грибоедов и свиньи" Журнал "Огонек". Еженедельник N 47, 25.11.02, стр. 28-31.
Ю. Прохоров - "Неизвестный Грибоедов" Журнал "Простор", N 7, 26.08.2002.
Цимбаева Е. Н. - "Грибоедов" М. Молодая гвардия, 2003г., 545 стр.
Киняпина Н. С. (докт. проф. МГУ) – "Внешняя политика Николая I" М. "Новая и новейшая история" NN1,2, 2001г.
Тютчева А. Ф. "При дворе двух императоров". М. 1990г.
Интернет. Литературное творчество ученых. "Жизнь и смерть А. Грибоедова" Счастливый год 2004г.